ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 Ն .1-Ն..... „09... հունվարի....2012թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի Ն 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, ՀՀ Նախագահի 1997թ. Մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1769-Ն որոշման առաջին կետի առաջին ենթակետի պահանջներով

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2010թվականի մարտի 31-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգի>> 44-րդ կետի <<Հանձնարարականում կատարման ժամկետների բացակայության դեպքում, որպես հանձնարարականի կատարման ժամկետ սահմանվում է 15 աշխատանքային օր>> բառերը փոխարինել <<Հանձնարարականում կատարման ժամկետների բացակայության դեպքում, որպես հանձնարարականի կատարման ժամկետ սահմանվում է 7 աշխատանքային օր, իսկ լրացուցիչ ուսումնասիրություններ, հիմնավորումներ պահանջող հարցերի դեպքում՝ առավելագույնը 3 աշխատանքային օր>> բառերով:
2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշումը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և գրանցման:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ